ԱՆՏԱՌԱՎԱՆ ԹԱՂԱՄԱՍԻ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԸ

ԼԵՆԻՆԱԿԱՆ

ԳՅՈՒՄՐԻ

ԿՈՒՄԱՅՐԻ-ԳՅՈՒՄՐԻ

Կումայրի անվանումը հայտնի է Ք.ա III հազարամյակից,որի մասին վկայում են Մսի կոմբինատի տարածքում հայտնաբերված իրերը:
Ըստ Գր.Ղափանցյանի՝ **այր՝ քարանձավ**, իսկ **կում՝ կույտ, խումբ**, այսինքն՝ նախաձևը նշանակում է

Կումայրի անվանաձևի **Կումիրի** համարժեքը հայտնի է Ք.ա XIII դարի սկզբից, իսկ նրա հնչյունափոխված ձևը՝ **Կումրի**-ն, բարբառային **Գումրի** ձևով ունի **Գյումրի, Գումբրի,Գյումբրի, Գիմրի** արտասանական տարբերակները: Ըստ Արմ. Պետրոսյանի՝ Կումայրին <<**Կումար**>> քաղաքի սեռական հոլովն է,իսկ վերջինս

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼ

<<Ողորմած Տեր Կայսրը Բարձրագույնս բարեհաճեց հրամայել Գյումրի ամրոցը այսուհետև անվանել Ալեքսանդրապոլ:
թիվ 3208. 8 նոյեմբերի 1837թ. Թիֆլիս>>

ԼԵՆԻՆԱԿԱՆ

1924թ. Ալեքսանդրապոլի աշխատավորների խնդրանքով և Հայաստանի կոմկուսի Կենտկոմի միջնորդությամբ ԽՍՀՄ Կենտգործկոմն Ալեքսանդրապոլը վերանվանվեց Լենինական:
Լենինականը եղել է հնագույն և խոշորագույն երկաթուղային տրանսպորտի, նաև տեքստիլ արդյունաբերության կենտրոն:

ԱՆՏԱՌԱՎԱՆ

Ըստ Ս.Նազարեթյանի՝ թաղամասը կոչվել է Անտառավան, քանի որ նախկինում այն բնակելի չի եղել, պատված է եղել անտառներով։ Անտառավան թաղամասում բացառապես կառուցվել են հինգհարկանի շենքեր, որոնց բնակարանները հատկացվել են գործարաններում ու ֆաբրիկաներում աշխատող բանվորներին՝ պետության կողմից։

ԱՍՏՂԻ ՀՐԱՊԱՐԱԿ

Աստղի հրապարակ է կոչվում, քանի որ աստղի նման է, և այդտեղից են սկզբնավորվում 5 փողոցները: Աստղի հրապարակից կամ ժողովրդական լեզվով **<<ԿՈՒԳ>>**-ից է սկսվում Անտառավան թաղամասը՝ հասնելով մինչև նախկին Կոմսոմոլի (այժմ Արտաշես Վասիլյանի) փողոցը:

ԱՆՏԱՌԱՎԱՆ ԹԱՂԱՄԱՍԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Աստղի հրապարակ

Մանուշյանի շատրվան

Անտառավան թաղամասի արբանյակային քարտեզ

ԱՆՏԱՌԱՎԱՆ ԹԱՂԱՄԱՍԸ ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Շառլ Ազնավուրի հրապարակ(Աստղի հրապարակ)

Անտառավան թաղամասի քարտեզը

Մանուշյանի

ԱՆՎԱՆԱՓՈԽՈՒՄՆԵՐ

Իլյա Էֆիմովիչ Ռեպին (1844-1930) - ռուս նկարիչ, դիմանկարների վարպետ, ռուսական ռեալիզմի ներկայացուցիչ։

Ռեպինի փողոցը վերանվանել է **Բորիս Եվդոկիմի Շչերբինայի** անունով նրա անգնահատելի մեծ գործի համար (օգնել է երկրաշարժից տուժածներին)։



ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Անգնահատելի և անծնազոհ նվիրման և ունեցած մարդկային բարձր արժանիքների համար նախկին ԽՍՀՄ նախարարների խորհրդի նախագահի առաջին տեղակալ Բորիս Եվդոկիմի Շչերբինայի անվամբ անվանակոչել Գյումրի քաղաքի Ռեպինի փողոցը:
2. Դիմել Ոստիկանության Գյումրու բաժնին /պետ Վ.Տ.Սաղաթելյան/ իրականացնելու վերը նշված փողոցի բնակիչների անձնագրերում համապատասխան փոփոխություն կատարելու գործընթացը:
3. Սույն որոշումը հրապարակել մամուլում և հեռուստատեսությամբ:
4. Հանձնարարել քաղաքապետարանի բնակկոմունալ տնտեսության և շրջակա միջավայրի պահպանության բաժնին /պետ. Հովհ. Գրքիկյան/ լուծել փողոցի անվանափոխման ցուցատախտակների պատրաստման և տեղադրման հարցը:

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝
Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ

ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Ա.ՄԱԶՄԱՆՅԱՆ

Միխայիլ Իվանովիչ Կալինին, կոմունիստական կուսակցության և խորհրդային պետության գործիչ, սոցիալիստական աշխատանքի հերոս, կոմունիստական կուսակցության անդամ 1898 թվականից: Պարգևատրվել է Լենինի և Կարմիր դրոշի շքանշաններով:

Մ. Կալինին փողոցը վերանվանել է **Գարեգին Տեր-Հովհաննիսյանի (Նժդեհ)** անվամբ՝ Գարեգին Նժդեհի հայրենանվեր գործը հաշվի առնելով:

Վլադիմիր Իլյիչ Ուլյանով, ռուս հայտնի հեղափոխական, քաղաքական գործիչ, քաղաքական տեսաբան: Եղել է Խորհրդային Միության կառավարության ղեկավարը՝ ժողկոմխորհի նախագահ:



Վազգեն Սարգսյան. ծնվել է 1959թ. մարտի 5-ին Արարատում: Քաղաքական գործիչ, արձակագիր և ռազմական գործիչ: 1990-1992թթ. եղել է «Երկրապահ» կամավորական խմբերի հրամանատար, ՀՀ Գերագույն խորհրդի պաշտպանության և ներքին գործերի մշտական հանձնաժողովի



ՄԻՍԱՔ ՄԱՆՈՒՇՅԱՆ

Հայ բանաստեղծ, ֆրանսիական դիմադրության շարժման մարտիկ, հակաֆաշիստ և Ֆրանսիայի ազգային հերոս: Միսաք Մանուշյանը ծնվել է 1906 թվականի սեպտեմբերի 1-ին Արևմտյան Հայաստանի Ադիյաման գյուղում՝ հայ գյուղացու ընտանիքում: Հայրը զոհվել է 1915 թվականի Մեծ Եղեռնի ժամանակ, մայրը՝ գաղթի ճանապարհին: Միսաքը եղբոր հետ կարողացել է փրկվել և տեղահանված հայերի հետ միասին հասնել Սիրիա: 1925 թվականին տեղափոխվում են Ֆրանսիա, սկզբում՝ Մարսել, ապա հաստատվում Փարիզում:

Դիմադրության շարժում

Միսաք Մանուշյանն իր կնոջ՝ Մելինե Մանուշյանի հետ մասնակցել է Ֆրանսիական դիմադրության շարժմանն ընդդեմ ֆաշիստական նվաճողների: Նա եղել է **«Ներգաղթյալների աշխատավորական ուժ»** մարտական խմբավորման հայկական բաժնի ակտիվիստ:



1939 թվականի սեպտեմբերի 3-ին, Ֆրանսիայի իշխանություններն արգելել են Կումունիստական կուսակցության գործունեությունը և ձերբակալել են բազմաթիվ ակտիվիստների, այդ թվում՝ նաև Մանուշյանին:

Գերմանական զորքերի՝ Ֆրանսիա ներխուժումից հետո Մանուշյանը ֆրանսիական բանակի նահանջող

ԱՐԹՈՒՐ ԹԱՐԽԱՆՅԱՆ



Ծնվել է Երևանում, ավարտել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտը: Աշխատել է Հայպետնախագիծ ինստիտուտում: Եղել է ՀՀ պետշինի նախագահի առաջին տեղակալը, 1968թ-ից դասավանդել է Երևանի պետական ճարտարաշինարարական համալսարանում:

Համահեղինակների հետ ճարտարապետի նախագծերով Երևանում կառուցվել են ՀՀ ԳԱԱ հասարակական գիտությունների ինստիտուտի մասնաշենքերը: Արթուր Թարխանյանն է եղել Մանուշյան փողոցի ծայրամասում գտնվող շատրվանի ճարտարապետը:

https://drive.google.com/file/d/1fd9niGxYoeOBW8cAMNld8N8BZWWqHHXw/view?usp=sharing

ԱՐԹՈՒՐ ԹԱՐԽԱՆՅԱՆԻ ՆՇԱՆԱՎՈՐ ԳՈՐԾԵՐԸ

Շատրվան Մանուշյան փողոցում

Զվարթնոց օդանավակայան



Երիտասարդական պալատ



Ծիծեռնակաբերդ

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

https://drive.google.com/file/d/1Ot3oMegdssexZhjMeKbjKW0eF9nAXPw5/view?usp=sharing

ՎԱՐԴԱՆ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Առաջին հարցազրույցը իրականացրել ենք Գյումրիի նախկին քաղաքապետ Վարդան Ղուկասյանի հետ(ծնվ. 1961թ. հունիսի 20) : Իմացանք, որ կատարվել է Անտառավանի փողոցների անվանափոխություն, քանի որ վերջիններս կրում էին ԽՍՀՄ որևէ կազմակերպության կամ գործչի անուն՝ Կոմսոմոլը՝ Արտաշես Վասիլյանի, Լենինգրադյանը՝ Վազգեն Սարգսյանի, Մ. Կալինինը՝ Գարեգին Նժդեհի: Վարդան Ղուկասյանը ոչ միայն Անտառավան թաղամասի, այլև գրեթե ամբողջ Գյումրի քաղաքի փողոցներն է անվանափոխել:

Ցեզ Վալիրեց <<Գյումրի քաղաքը և մարդիկ>> գիրքը՝ որպես քաղաքի ուսումնասիրության գրավոր տեղեկության աղբյուր: Նախկին քաղաքապետը հարցազրույցի ընթացքում տրամադրեց նաև Անտառավան թաղամասի նշանավոր մարդկանց տվյալները:





ՍԵՐԳԵՅ ՆԱԶԱՐԵԹՅԱՆ

Սերգեյ Նազարեթյանի ծնողները մանկավարժներ են եղել, մայրը ազգությամբ հույն էր, Ալավերդուց, հայրը հառիջեցի էր: Սերգեյ Նորայրի Նազարեթյան. հայ երկրաֆիզիկոս, երկրաբանահանքաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր: ՀԽՍՀ ԳԱ Երկրաֆիզիկայի և ճարտարագիտության սեյսմոլոգիայի ինստիտուտի գիտաշխատող, ՌԴ բնական ԳԱ անդամ:

Գյումրեցիները երկու խոշոր երկրաշարժ են տեսել՝ Լենինականի1926թ. և 1988թ.: Սպիտակի երկրաշարժից ամենաշատ զոհերը եղել են Գյումրի քաղաքից՝ 17000 հազար մարդ,փլուզվել են 147 շենք, 5 դպրոց: Համամատաբար քիչ զոհեր են եղել Անտառավան թաղամասից, քանի որ շատ էին մասնավոր տները, որոնք կառուցված էին հայկական ավանդույթներով: Փլուզված դպրոցներից մեկն էլ 20-րդ դպրոցն էր:

https://drive.google.com/file/d/1EUFsXRLSalePGnmZylJQ4QGmc7GqHlI0/view?usp=sharing

20-ՐԴ ԴՊՐՈՑ

Դպրոցը հիմնադրվել է 1950թ.-ին և կրել է Գ.Սուդուկյանի անունը: 1961թ դպրոցը դարձել է անգլիական թեքումով: Սակայն 1988 թ երկրաշարժը չի խնայել նաև 20-րդ դպրոցը, ցավոք սրտի, դպրոցից զոհվել են 44 աշակերտ և ուսուցիչ: Երկրաշարժից ընդամենը երկու ամիս անց դպրոցում կազմակերպվել են դասերը. իհարկե, դասերը եղել են վրաններում: Երբ անգլիացի լրագրողները հարցրել են դպրոցի աշակերտներին, թե ինչ են ուզում, աշակերտները պատասխանել են, որ ուզում

Անգլիական կառավարության ֆոնդերի և անգլիացիների նվիրատվության հաշվին բավականաչափ գումար էր հավաքվել դպրոցը բացելու համար: 1990թ-ի հունիսին դպրոցը բացելու պատիվը տրվել է Անգլիայի վարչապետ Մարգրետ Թեթչերին: Ի երախտագիտություն մեծ Բրիտանիայի՝ Դպրոցը վերանվանվեց

ՍԱՄՎԵԼ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Սամվել Պետրոսյանը ծնվել է 1951 թ. հոկտեմբերի 12-ին։ Ավարտել է Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտի քանդակագործության բաժինը (Ա. Հարությունյանի դասարանը)։ Նա պատմեց, որ արվեստում ստեղծագործելը սահմանափակ էր։ Հոգևոր, ազատատենչական ոգով քանդակները արգելվում էին. կարելի էր քանդակել միայն քաղաքական գործիչներին։

Սամվել Պետրոսյանի համար շատ դժվար էր քանդակել Ծառլ Ազնավուրի արձանը, քանի որ առաջին անգամ էր քանդակում կենդանի մարդու, հայտնի բարերարի՝ <<մաեստրոյի>> արձանը։ Քանդակագործի ընտրությունը եղել է մրցութային, և հաղթել է Սամվել Պետրոսյանը։

Բացառել էր արձանի ոչ լրիվ հասակով քանդակելու տարբերակը: Շառլ Ազնավուրի նման <<Մեծ Մարդուն>>, ըստ քանդակագործի, պետք էր քանդակել ոչ թե կիսանդրին, այլ ամբողջ հասակով (որոշ ժամանակ Ազնավուրը եղել է նաև բնորդ): Մենք եղանք նաև պարոն Պետրոսյանի արվեստանոցում: Ծանոթացանք նրա գործերին և իմացանք քանդակագործության արվեստի նրբություններն ու գաղտնիքները:



ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԴՊՐՈՑԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Մեր աշխատանքը մինչ գարնանային դպրոցի սկսվելը նույնպես շատ հետաքրքիր էր: Միասին լսում, քննարկում, համագործակցում և մտածում էինք պաստառի տեսքը: Ամբողջ թիմը բաժանվել էր փոքրիկ խմբերի, ու ամեն խումբ իր աշխատանք էր կատարում։ https://drive.google.com/drive/folders/1KlcJHqclztPoZ8fjgfXCrbT77UeMltcS

ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԴՊՐՈՑ

Մենք մասնակցեցինք գարնանային դպրոցին ամբողջ թիմով: Գարնանային դպրոցը, իրոք, մեր սպասելիքները արդարացրեց, ունեցանք հետաքրքիր, բովանդակալից ու ծանոթություններով լի ժամանց:

1. Մենք մարզեցինք մեր արագ կողմնորոշվելու, հաղորդակցվելու և այլ խմբերի հետ համագործակցելու հմտությունները
2. Ամրապնդեցինք ու ձեռք բերեցինք նոր գիտելիքներ խորհրդային և հետխորհրդային շրջանների մասին
3. Զարգացրինք մեր լսելու ունակությունը

Մեզ շատ հետաքրքրեց փազլներով խաղը:

https://drive.google.com/file/d/1GuSwTl4OXkpMCTpPMva72ZPhy3HN8RCw/view?usp=sharing

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՇՐՋԱՆ



1. Բոլոր բնագավառներում կային սահմանափակումներ։
2. Ստեղծագործել, փառաբանել ու գովերգել կարող էին միայն ԽՍՀՄ պետական ու քաղաքական գործիչների մասին։
3. Կենդանության օրոք միայն Ստալինի արձանն էր տեղադրվել ԽՍՀՄ տարբեր վայրերում։
4. Խորհրդային տարիներին Գյումրի քաղաքում գործազրկություն չկար։
5. Միջին Ասիայի միութենական և Ուկրաինայի հանրապետություններից երիտասարդ աղջիկներ են գալիս Գյումրի՝ տե[illegible] հավար։

6.Շենքերը կառուցվում էին ոչ որակյալ շինանյութերով, հաշվի չէր առնվում սեյսմիկ կայունությունը և ռելիեֆը
7.Անտառավան թաղամասի շենքերը քանդվել են երկրաշարժից և ԽՍՀՄ փլուզման արդյունք չեն ԽՍՀՄ փլուզման

ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ

1.Բոլոր բնագավառներում մարդիկ համեմատաբար ավելի ազատ են իրենց գործունեության մեջ։
2. Ստեղծագործել կարելի է բոլոր թեմաներով։
3. Քանդակում էին ոչ միայն քաղաքական գործիչների այլ մշակույթի ու գիտության տարբեր բնագավառների մարդկանց։
4. Ներկա պահին Գյումրի քաղաքում կա գործազրկություն։
5. Հիմա Հայաստանից են գնում այլ երկրներ աշխատելու։

6. Հիմա աշխատում են շենքերի որակյալ լինելու վրա, հաշվի են առնվում ռելիեֆը և սեյսմիկ կայունությունը
7. Անտառավան թաղամասը երկրաշարժից հետո չվերակառուցվեց, այլ տեղափոխվեց նոր թաղամասեր՝ Մուշ և Անի

8. Անտառավան թաղամասում բնակարաններ հատկացվել են մարդկանց պետության կողմից անվճար։
9. Հարուստ և աղքատ չկար։
10. Առողջապահությունը և կրթությունը անվճար էր։
11. Տրանսպորտը շատ էժան էր։

12. Բանկում ունեին խնայողություններ (ավանը)
13. Խանութներում ապրանքի տեսականին շատ չէր, քանի որ ապրանք չէին ներկրում։ Ամեն ինչ տեղական էր։

14. Գոյություն ուներ բնակարանի բարելավման ծրագիր նորաստեղծ ընտանիքների համար։
15. Կոմունալ վճարումները (գազը, լույսը, ջուրը) չափից էժան էին ու ստանդարտ՝ անկախ ընտանիքի անդամների թվից ու բնակարանի զբաղեցրած մակերեսից։
16. Մարդիկ քաղաքականապես այնքան էլ հասուն չէին։

8. Պետությունը այլևս անվճար բնակարան չի հատկացնում։
9. Ներկա պահին կա թե՛ հարուստ, թե՛ աղքատ։
10. Առողջապահությունը և կրթությունը վճարովի են։
11. Տրանսպորտը թանկ է։

12. Մարդիկ բանկերում ունեն վարկեր

13. Խանութներում տեսականին շատ է, քանի որ ոչ միայն տեղական է, այլև տարբեր երկրներից ներկրված։

14. Նորաստեղծ ընտանիքների համար բնակարանների բարելավման ծրագրեր չկան։

15. Կոմունալ վճարումները կատարվում են հաշվիչի ցուցմունքների համապատասխան՝ կախված ամսական օգտագործած ծավալից։

16. Մարդիկ քաղաքականապես

ՆԿԱՐՆԵՐ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻՑ ԵՎ ԱՐՎԵՍՏԱՆՈՑԻՑ

ՄԵՐ ԱՌՕՐՅԱՆ



ՀՂՈՒՄՆԵՐ

https://drive.google.com/file/d/1Ot3oMegdssexZhjMeKbjKW0eF9nAXPw5/view?usp=sharing

https://drive.google.com/file/d/1Wmj2zJKhirwIG9La2rENvZvVY_vRSri8/view?usp=sharing

https://drive.google.com/file/d/1V2dFEYzbwd5JDJIYEOEefVad-Ys8G2lz/view?usp=sharing

https://drive.google.com/file/d/1Epc-UBJ91Eexkw0PxV0ql1k6irapsMwp/view?usp=sharing


ՍՈՌԱՆԱԼՈՒ ԵՎ
ՀԻԵԼՈՒ ԱՐԱՆՔՈՒՄ
ՈՒՂԱՐԿԵԼ
acer